



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 14 ՅՈՒՆԻԱՐ, 2013

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ԻՍՏԱՏՈՒԹԻՒՆ ՍՈՂՈՍՈՒՆԻ 1

ՓՆՏՈՒԵԼ ԶԱՍՏՈՒԱԾ ԵՒ ՓԱԽԶԻԼ ՄԵՂՔԷՆ

Միրեցե՛ք արդարութիւնը, երկրի դատաւորներ: Բարին խորհեցե՛ք Տիրոջ մասին եւ պարզ սրտով փնտռեցե՛ք զԻնք: Աստուած պիտի գտնէ անոնք, որոնք չեն փորձեր զԻնք, եւ պիտի յայտնուի անոնց, որոնք թերահաւատ չեն: Անիրաւ խորհուրդները մարդս կը բաժնեն Աստուծա՛ն: Իմաստուն եւ անբիծ հոգին ցնցութեանէ կը փախչի, ու կը մերժէ անմիտներուն խորհուրդները:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՐՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղէրոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ԱՐՈԹՔ

Սուրբ Աստուած, անմահ եւ հզօր. դուն որ սրբաբանութեամբ եւ անդադրում օրհնաբանութեամբ կը պաշտուիս հրեղէն եւ անմարմին հրեշտակներուն կողմէ: Մենք, բու ձեռքովդ ստեղծուած բանաւոր հօտդ, բու առատաբաշխ գթութիւնդ կը խնդրենք: Ամէն:



*Պահպան ամենայնի Քրիստոս,
աջ բո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ բո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻՒԹԸ



ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ, ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԵՒ ԾՆՆԴՈՑ ԳԻՐՔԻ



I. Ընդհանուր Հասարարումներ Աստուածաշունչի Մասին.-

- 1.- Աստուծոյ յայտնութիւնն է:
- 2.- Աստուած եւ մարդ յարաբերութեան պայտնութիւնն է:
- 3.- Աստուծոյ Ուխտին գիրքն է:
- 4.- Քրիստոսի մասին վկայութիւն եւ Քրիստոսի ներկայութիւնն է:
- 5.- Աստուծոյ Արքայութեան պարկերացումը եւ անոր կատարման նախապարկերացումն է:
- 6.- Աստուծոյ կենդանի Խօսքն է:
- 7.- Աստուծոյ փրկութեան պատգամն է:
- 8.- Աստուծոյ Եկեղեցիին առաջնորդութեան համար տրուած գիրքն է:

Այլ խօսքով, Աստուածաշունչին նպատակն է ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ:

II. Ներածութիւն Հին Կրակարանի

Երբայեցիները Աստուածաշունչին կու տան «Թ - ա - ն - ա - խ» Թանախ անուանումը:

Կազմուած «Թորահ», «Նրվիիմ» եւ «Խրթուվիմ»:

Թորահ կը նշանակէ Օրէնք, Նրվիիմ՝ Մարգարէներ, իսկ Խրթուվիմ՝ Գիրքեր:

Ուրեմն երբայական դասաւորումը ունի հետեւեալ պարկերը.-

ա. Օրէնքի գիրքեր

բ. Մարգարէական գիրքեր

գ. Գիրքեր, որ իր մէջ կը ներառեն զանազան նիւթեր, պատմական, բանաստեղծութիւններ, իմաստասիրութիւն, եւ նոյնիսկ, Քրիստոնէական առումով, կարգ մը մարգարէական գիրքեր:

Իսկ Քրիստոնէական դասաւորումն է.-

ա. Օրէնքի գիրքեր. կը սկսի ստեղծագործութեամբ եւ օրէնքով: Այս օրէնքը քաղաքացիական եւ ընկերային կեանքը կազմակերպող կանոններու զումար մը չէ, այլ Աստուածային օրէնք մըն է. ժողովուրդի հոգեւոր պարասարութիւնն է:

բ. Պատմական գիրքեր. Աստուծոյ եւ մարդոյ յարաբերութեան պայտնութիւնն է: Աշխարհը եւ մարդը կը սկսի ստեղծագործութեամբ, եւ սակայն հոն չի կենար, կը շարունակուի այդ պայտնութիւնը, կը սկսի տեղէ մը, շարունակական ընթացքով կ'առաջնորդէ մեզ դէպի նպատակակէտ մը՝ յայտնութեան պայտնութեան, փրկութեան պայտնութեան, եւ այդ փրկութեան պայտնութիւնը մենք կը բնորոշենք իբրեւ Աստուծոյ եւ մարդոյ միջեւ եղած Ուխտի պայտնութիւն, որ ունի սկիզբ, ընթացք եւ կատարած, աւարտ:

գ. Բանաստեղծական կամ իմաստութեան գիրքեր: Բանի որ մարդ այս աշխարհի մէջ է, պէտք ունի հոգեւոր դաստիարակութեան: Իմաստութեան գիրքերու նպատակն է մարդուն տալ այն դաստիարակութիւնը, որ մարդս հասցնէ Աստուծոյ նպատակին: Հետեւաբար իմաստութիւնը պայտնութեան հետ կապուած անոր մէկ կարեւորագոյն տուեալն է:

դ. Մարգարէական գիրքեր: Մարգարէական գիրքերը հիմնականին մէջ սպագայի մասին կը խօսին: Այդ իմաստով սպագան այն լրումն է ուր կ'ուղղուի ամբողջ աշխարհը եւ մարդ արարածը:

II. Ներածութիւն Ծննդոց Գիրքի

Ծննդոց գիրքը մեզի կը ներկայացնէ.-

1. Տիեզերքի ծնունդը

2. Երկրագունդի ծնունդը

3. Մարդու ծնունդը

4. Մեղքի ծնունդը

5. Փրկութեան ծնունդը

6. Մարդկային ընկերութեան զարգացումը (սկիզբ, ընթանիք, քաղաքներ, արուստերներ):

Ժամանակագրական առումով Ծննդոց գիրքը կարելի է բաժնել երկու մասին.-

1. 1- 11 գլխ, ուր շար կարճ, արագ-արագ նշաններ կան:

2. 12 - 50 գլխ, Աբրահամի եւ նահապետներու պայտնութիւնն է:

Թէւ Ծննդոց գիրքը պատմական գիրք է, բայց միայն պայտնութիւն չէ: Անոր մէջ արձանագրուած պայտնութիւնները կապ ունին Աստուծոյ փրկագործական ծրագրին ու նպատակին հետ:

Երբ Ծննդոց գիրքի, մանաւանդ առաջին բաժինը կը համեմատենք հին եգիպտական, ասորեստանեան, բաբելական եւ պարսկական կայսրութիւններու պայտնութիւններուն հետ, կը տեսնենք որոշ նիւթերու եւ պատմութեան նոյնութեան եզրեր կան. օրինակ ստեղծագործութեան, ջրհեղեղի եւ աշտարակաշինութեան պատմութիւնները: